Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
հուլիսի 31-ի N 826 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ ԿԱՏԱՐԵԼԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ֆիզիկական անձի (վարձու աշխատող, անհատ ձեռնարկատեր, նոտար) կողմից սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու և սոցիալական վճար կատարելը վերսկսելու մասին դիմումները հարկային մարմին ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստը:

ԲԱԺԻՆ 2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

3. Սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու մասին դիմումը (այսուհետ՝ դիմում) կարող են ներկայացնել՝

1) 1974 թվականին և դրանից հետո ծնված վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները (բացառությամբ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի).

2) մինչև 1974 թվականը ծնված այն վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները, ովքեր մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը կամավորության սկզբունքով դարձել են պարտադիր կուտակային համակարգի մասնակիցներ:

4. Վարձու աշխատողը (բացառությամբ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի) դիմումը ներկայացնում է գործատուին՝ թղթային տարբերակով: Թղթային դիմումը պետք է ներառի՝

1) գործատուի անվանումը.

2) դիմողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը.

3) հավաստում այն մասին, որ դիմողը տեղեկացված է, որ սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու կամարտահայտությունը տարածվում է մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի վրա և 2017 թվականի հուլիսի 1-ից կատարելու է սոցիալական վճարներ (լրացվում է միայն 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված անձի դեպքում).

4) դիմումը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

5) դիմողի ստորագրությունը:

5. Գործատուն, սույն կարգի 4-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո, ոչ ուշ, քան դիմումն ստանալու ամսվա վերջին աշխատանքային օրը, դրա մասին էլեկտրոնային եղանակով, անձնավորված հաշվառման համակարգի միջոցով տեղեկացնում է հարկային մարմնին՝ ներկայացնելով համապատասխան էլեկտրոնային փաստաթուղթ՝ համաձայն N 1 ձևի: Էլեկտրոնային փաստաթղթում վարձու աշխատողի (աշխատողների) տվյալը (տվյալները) (ում համար ներկայացվում է փաստաթուղթը) լրացվում է (լրացվում են) անձնավորված հաշվառման տեղեկատվական համակարգից, ընտրելու միջոցով, իսկ մնացած բոլոր տվյալները լրացվում են ինքնաշխատ եղանակով: Թղթային դիմումները

պատշաճ կարգով պահպանվում են գործատուի մոտ: Սույն կետով նախատեսված էլեկտրոնային փաստաթուղթն ստորագրվում է գործատուի կողմից և ներառում է՝

1) փաստաթղթի մուտքագրման համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից).

2) փաստաթուղթը ներկայացնող գործատուի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը, ազգանունը), ՀՎՀՀ-ն.

3) սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու մասին դիմում ներկայացրած վարձու աշխատողի անունը, ազգանունը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշը չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) հավաստում, որ 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված վարձու աշխատողը տեղեկացված է, որ սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու կամարտահայտությունը տարածվում է մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի վրա և 2017 թվականի հուլիսի 1-ից կատարելու է սոցիալական վճարներ.

5) փաստաթուղթը ներկայացնելու օրը, ամիսը տարեթիվը:

6. Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված՝ մեկ էլեկտրոնային փաստաթղթով գործատուն միաժամանակ կարող է հարկային մարմնին տեղեկացնել սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու մասին դիմում ներկայացրած՝ մեկից ավելի վարձու աշխատողների մասին:

7. Եթե վարձու աշխատողը սույն կարգի 4-րդ կետում նշված՝ թղթային դիմումը ներկայացնում է 2014 թվականի հուլիս կամ օգոստոս ամիսներին (մինչև 2014 թվականի հուլիս ամսվա անձնավորված հաշվարկը ներկայացնելը), ապա գործատուն դրա մասին հարկային մարմնին տեղեկացնում է անմիջապես:

8. Եթե վարձու աշխատողը սույն կարգի 4-րդ կետում նշված՝ թղթային դիմումը ներկայացնում է 2014 թվականի դեկտեմբեր ամսին (մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը), ապա գործատուն դրա մասին հարկային մարմնին տեղեկացնում է ոչ ուշ, քան 2014 թվականի դեկտեմբերի 25-ին:

9. Անհատ ձեռնարկատերը, նոտարը և հարկային գործակալի պարտակա-նություններից ազատված գործատուի վարձու աշխատողը սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու մասին դիմումը ներկայացնում են էլեկտրոնային եղանակով, անձնավորված հաշվառման համակարգի միջոցով հարկային մարմին ներկայացնելով համապատասխան էլեկտրոնային փաստաթուղթ՝ համաձայն N 2 ձևի: Անհատ ձեռնարկատերը, նոտարը, հարկային գործակալի պարտականություններից ազատված աշխատողը դիմումի տեքստում որևէ գրառում չեն կատարում (բոլոր տվյալները լրացվում են ինքնաշխատ եղանակով): Սույն կետով նախատեսված էլեկտրոնային փաստաթուղթն ստորագրվում է այն ներկայացնողի (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի կամ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի) կողմից և ներառում է՝

1) փաստաթղթի մուտքագրման համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից).

2) փաստաթուղթը ներկայացնողի (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի կամ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի) գործատուի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը, ազգանունը), ՀՎՀՀ-ն կամ հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշը չստանալու մասին տեղեկանքի համարը).

3) եթե փաստաթուղթը ներկայացնում է 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված անձը, ապա հավաստում, որ տեղեկացված է, որ սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու կամարտահայտությունը տարածվում է մինչև 2017

թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի վրա և 2017 թվականի հուլիսի 1-ից կատարելու է սոցիալական վճարներ.

4) փաստաթուղթը ներկայացնելու օրը, ամիսը տարեթիվը:

10. Սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու մասին դիմումը կարող է ներկայացվել հարկային մարմին (գործատուն կարող է էլեկտրոնային եղանակով, անձնավորված հաշվառման համակարգի միջոցով հարկային մարմնին տեղեկացնել դիմում ստանալու մասին) մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:

11. Գործատուի կողմից սույն կարգի 5-րդ կետում նշված էլեկտրոնային փաստաթուղթը սխալմամբ հարկային մարմին ներկայացնելու դեպքում այն կարող է չեղարկվել՝ մինչև տվյալ ամսվա անձնավորված հաշվարկը ներկայացնելը:

ԲԱԺԻՆ 3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ ԿԱՏԱՐԵԼԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

12. Սոցիալական վճար կատարելը վերսկսելու մասին դիմումը կարող են ներկայացնել սույն կարգի 3-րդ կետում նշված՝ սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարված անձինք:

13. Սոցիալական վճար կատարելը վերսկսելու մասին դիմումը վարձու աշխատողը (բացառությամբ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի) ներկայացնում է գործատուին՝ թղթային տարբերակով: Թղթային դիմումը պետք է ներառի՝

1) գործատուի անվանումը.

2) դիմողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը.

3) հավաստում այն մասին, որ դիմողը տեղեկացված է, որ սոցիալական վճար կատարելը վերսկսելու դեպքում անձն այլևս չի կարող հրաժարվել սոցիալական վճար կատարելուց:

4) դիմումը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը.

5) դիմողի ստորագրությունը:

14. Գործատուն, սույն կարգի 13-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո ոչ ուշ, քան դիմումն ստանալու ամսվա վերջին աշխատանքային օրը, դրա մասին էլեկտրոնային եղանակով, անձնավորված հաշվառման համակարգի միջոցով տեղեկացնում է հարկային մարմնին՝ ներկայացնելով համապատասխան էլեկտրոնային փաստաթուղթ՝ համաձայն N 3 ձևի: Էլեկտրոնային փաստաթղթում վարձու աշխատողի տվյալները (ում համար ներկայացվում է փաստաթուղթը) լրացվում են անձնավորված հաշվառման տեղեկատվական համակարգից, ընտրելու միջոցով, իսկ մնացած բոլոր տվյալները լրացվում են ինքնաշխատ եղանակով): Սույն կետով նախատեսված էլեկտրոնային փաստաթուղթն ստորագրվում է գործատուի կողմից և ներառում է՝

1) փաստաթղթի մուտքագրման համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից).

2) փաստաթուղթը ներկայացնող գործատուի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը, ազգանունը), ՀՎՀՀ-ն.

3) սոցիալական վճար կատարելը վերսկսելու մասին դիմում ներկայացրած վարձու աշխատողի անունը, ազգանունը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշը չստանալու մասին տեղեկանքի համարը.

4) հավաստում, որ վարձու աշխատողը տեղեկացված է, որ այլևս չի կարող հրաժարվել սոցիալական վճար կատարելու պարտականությունից.

5) փաստաթուղթը ներկայացնելու օրը, ամիսը տարեթիվը:

15. Սույն կարգի 14-րդ կետով նախատեսված՝ մեկ էլեկտրոնային փաստաթղթով գործատուն միաժամանակ կարող է հարկային մարմնին տեղեկացնել սոցիալական վճար կատարելը վերսկսելու մասին դիմում ներկայացրած՝ մեկից ավելի վարձու աշխատողների մասին:

16. Անհատ ձեռնարկատերը, նոտարը և հարկային գործակալի պարտա-կանություններից ազատված գործատուի վարձու աշխատողը սոցիալական վճար կատարելը վերսկսելու մասին դիմումը ներկայացնում են էլեկտրոնային եղանակով, անձնավորված հաշվառման համակարգի միջոցով հարկային մարմին ներկայացնելով համապատասխան էլեկտրոնային փաստաթուղթ՝ համաձայն N 4 ձևի: Անհատ ձեռնար-կատերը, նոտարը, հարկային գործակալի պարտականություններից ազատված աշխատողը դիմումի տեքստում որևէ գրառում չեն կատարում (բոլոր տվյալները լրացվում են ինքնաշխատ եղանակով):

17. Սոցիալական վճար կատարելը վերսկսելու մասին դիմում կարող է ներկայացնել նաև այն անձը, ով ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը, մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով կամավորության սկզբունքով մասնակցել է պարտադիր կուտակային բաղադրիչին և ներկայացրել է սոցիալական վճար կատարելը դադարեցնելու մասին դիմում՝ սույն կարգի 13-16-րդ կետերով սահմանված կարգով:

18. 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված անձը սոցիալական վճար կատարելը վերսկսելու մասին դիմումը կարող է ներկայացնել մինչև 2017 թվա-կանի մայիս ամիսը (ներառյալ): Մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված անձը սոցիալական վճար կատարելը վերսկսելու մասին դիմումը կարող է ներկայացնել առանց ժամկետի սահմանափակման: Այս դեպքում սոցիալական վճարները կատար-վում են դիմումը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվանից (հաջորդող ամսվա աշխատավարձից):

19. Գործատուի կողմից սույն կարգի 14-րդ կետով նախատեսված էլեկտրոնային փաստաթուղթը սխալմամբ հարկային մարմին ներկայացնելու դեպքում այն կարող է չեղարկվել: Եթե փաստաթուղթը չեղարկվում է վերսկսելու ամսվա համար ներկայացված հաշվարկից հետո, ապա անձը սոցիալական վճարներ չի կատարում հաշվարկ ներկայացնելու ամսվան հաջորդ հաշվետու ամսվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև N 1

Է Լ Ե Կ Տ Ր Ո Ն Ա Յ Ի Ն Փ Ա Ս Տ Ա Թ Ո Ի Ղ Թ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ԴԻՄՈՒՄ) սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու մասին	Փաստաթղթի մուտքագրման համար ---------- *(լրացվում է հարկային մարմնի կողմից)*							
Գործատուի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը, ազգանունը)								
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)								
Դիմումը ներկայացնելու ամսաթիվը								

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (21.06.2014թ. ՀՕ-67-Ն) 81-րդ հոդվածի 1-ին մասը՝ հայտնում եմ, որ հետևյալ քաղաքացին (քաղաքացիները) հրաժարվում է (հրաժարվում են) սոցիալական վճար կատարելու պարտականությունից:

Քաղաքացին (քաղաքացիները) տեղեկացված է (տեղեկացված են), որ սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու կամարտահայտությունը տարածվում է մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի վրա և 2017 թվականի հուլիսի 1-ից կատարելու է (կատարելու են) սոցիալական վճարներ (բացառությամբ մինչև 1974 թվականը ծնված՝ կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակից հանդիսացող անձանց):

Սոցիալական վճար կատարելուց հրաժարված անձանց տվյալները

Անունը, ազգանունը	ՀԾՀ-ն	Հրաժարվում է սոց. վճար կատարելուց

☑ Հանձնվել է սխալմամբ:

Հարկային գործակալի (գործատուի) պատասխանատու անձի (անձանց) ստորագրությունը (ստորագրությունները)

Ձև N 2

Է Լ Ե Կ Տ Ր Ո Ն Ա Յ Ի Ն Փ Ա Ս Տ Ա Թ Ո Ի Ղ Թ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ

ԴԻՄՈՒՄ **սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու (բացառությամբ մինչև 1974 թվականը ծնված՝ կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակից հանդիսացող անձանց)**	Փաստաթղթի մուտքագրման համար ---------- *(լրացվում է հարկային մարմնի կողմից)*
Անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի), հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի անունը, ազգանունը	
Վարձու աշխատողի գործատուի (հարկային գործակալի պարտականություններից ազատված) անվանումը	
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
Վարձու աշխատողի գործատուի (հարկային գործակալի պարտականություններից ազատված) հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
Հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ)	
Դիմումը ներկայացնելու ամսաթիվը	

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (21.06.2014թ. ՀՕ-67-Ն) 81-րդ հոդվածի 1-ին մասը՝ հրաժարվում եմ սոցիալական վճար կատարելու պարտականությունից:

Տեղյակ եմ, որ սոցիալական վճար կատարելուց հրաժարվելու կամարտահայտությունը տարածվում է մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի վրա և 2017 թվականի հուլիսի 1-ից կատարելու եմ սոցիալական վճարներ:

Սոցիալական վճար կատարողի ստորագրությունը

Ձև N 3

Է Լ Ե Կ Տ Ր Ո Ն Ա Յ Ի Ն Փ Ա Ս Տ Ա Թ Ո Ի Ղ Թ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ ԿԱՏԱՐԵԼԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ԴԻՄՈՒՄ) սոցիալական վճար կատարելը վերսկսելու	Փաստաթղթի մուտքագրման համար ---------- *(լրացվում է հարկային մարմնի կողմից)*
Գործատուն, անհատ ձեռնարկատերը (նոտար)	
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
Դիմումը ներկայացնելու ամսաթիվը	

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (21.06.2014 թ. ՀՕ-67-Ն) 81-րդ հոդվածի 4-րդ մասը՝ հայտնում եմ, որ քաղաքացի_____-ը (ՀԾՀ կամ ՀԾՀ չստանալու մասին տեղեկանքի համար՝ _____) դիմել է սոցիալական վճար կատարելը վերսկսելու համար:

Քաղաքացին տեղեկացված է, որ այլևս չի կարող հրաժարվել սոցիալական վճար կատարելուց:

☑ Դիմումը հանձնվել է սխալմամբ:

Հարկային գործակալի (գործատուի) պատասխանատու անձի (անձանց)
ստորագրությունը (ստորագրությունները)

Ձև N 4

Է Լ Ե Կ Տ Ր Ո Ն Ա Յ Ի Ն Փ Ա Ս Տ Ա Թ Ո Ւ Ղ Թ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐ ԿԱՏԱՐԵԼԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ

ԴԻՄՈՒՄ **սոցիալական վճար կատարելը վերսկսելու**	Փաստաթղթի մուտքագրման համար ---------- *(լրացվում է հարկային մարմնի կողմից)*
Անհատ ձեռնարկատիրոջ (նոտարի), հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի անունը, ազգանունը	
Վարձու աշխատողի գործատուի (հարկային գործակալի պարտականություններից ազատված) անվանումը	
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
Վարձու աշխատողի գործատուի (հարկային գործակալի պարտականություններից ազատված) հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
Հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ)	
Դիմումը ներկայացնելու ամսաթիվը	

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (21.06.2014թ. ՀՕ-67-Ն) 81-րդ հոդվածի 4-րդ մասը՝ վերսկսում եմ սոցիալական վճար կատարելը:

Տեղյակ եմ, որ այլևս չեմ կարող հրաժարվել սոցիալական վճար կատարելուց:

Սոցիալական վճար կատարողի ստորագրությունը